

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

„ՄԵԼԿ“

ԴՐԱՎԱՆԵԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական
ՀԵՌՈՒՄԻՆԵՐ:

«ՄԵԼԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարեկանը 6 ռուբլի:
Գրվել «ՄԵԼԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների մի-
ջև, Թիֆլիսում, թաղամասի մէջ):

Կայսերական ռուսի թագաւորին «ՄԵԼԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զէյթունի հրկիզանքի օգտին հաւաքվող նը-
պասներ. — ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գիւղական
կենտրոնական դպրոցներ. Ներքին լուրեր. —
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գաղաքական տեսութիւն.
Պարսկա-Հայաստան. Դամասկոսի թերթեր. Արտա-
քին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌՈՒՄԻՆԵՐ. —
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԶԵՅԹՈՒՆԻ ՀՐԿԻԶԱՆԿՆԵՐԻ ՕԳՏԻՆ ՀԱՒԱԳ-
ՎՈՂ ՆՊԱՍՏՆԵՐ

Կարգավոր լրագրները, ամենքը համոզ-
վում են, որ ամէն տեղ, որտեղ ապրում են
հայեր՝ հանգանակութիւնները յօգուտ Զէյ-
թունի հրկիզանքի եւսակողմ կերպով
շարունակվում են: Մի տեղ կարգում էք,
որ հանգանակվել է այդ նպատակով 2
հազար ռուբլի, մի այլ տեղ 3 կամ նոյն
իսկ 4 հազար ռուբլի, և այլն, չը կայ
վերջապէս մի փոքրիկ քաղաք, որտեղ մի
քանի հարիւր ռուբլի, մի աւան, մի գիւղ,
որտեղ մի քանի տասնեակ ռուբլի հաւաք-
ված չը լինէր յօգուտ հրկիզանք, սովա-
տանջ և անսպաստան մնացած զէյթուն-
ցիներին:

Բայց ահա ձեռքը վրա է հասել. փողե-
րը հաւաքվում են, մասամբ ուղարկվում
են արդէն Կ. Պոլսի յանձնաժողովին, որ
յատկապէս կազմակերպված է տուրապեալ
զէյթունցիներին օգնութիւն հասցնելու
համար, մասամբ դեռ մնում են հանգա-
նակութեան տեղում, կամ հոգեւոր իշխա-
նութեան ձեռքում: Սակայն ոչ ոք չէ ա-
ռաջարկում իրան այն հարցը թէ՛ ձեռք
հասած լինելով, արդեօք հարկաւոր չէ՞
շտապել հանգանակած գումարները շուտով
տեղը հասցնել, քանի որ օգնութեան մէջ
անհրաժեշտ կարիքը հէնց հիմա, ձեռք
ժամանակ է զգացվում և ոչ թէ յետոյ,
երբ ձեռնադր ծանր և անհրաժեշտ եղա-
նակները կանցնեն: Ուրիշ կողմից էլ ոչ ոք
իրան չէ առաջարկում այն հարցը թէ՛ Կ.
Պոլսի յանձնաժողովը ի՞նչ է անում, ի՞նչ
միջոցներ է դիմում կարօտանքներին օգնե-
լու, արդեօք անմիջապէս հասցնում է նը-
րանց այն բոլոր գումարները, որոնք հետ-
գահեալ ստացվում են յանձնաժողովի մէջ,
թէ՛ դեռ ևս յապաղում է փողերը ուղար-
կելու, կամեալով աճեցնել ձեռք բերած
գումարները:

Օգնութիւնը հէնց հիմա է հարկաւոր
և ոչ թէ յետոյ. պէտք է կարելին չափ
շտապել շուտ հասցնել տեղը ստացած գու-
մարները, որքան էլ անշան լինէին նրանք:
Եւ նոյն իսկ այն պատճառով, որ ամէն
տեղի հայերը այդքան յօգուտութեամբ և
պատրաստակամութեամբ արձագանք տուե-
ցին հոգեւոր իշխանութեան և Կ. Պոլսի
մէջ կազմակերպված յանձնաժողովի հրա-
ւերին օգնութեան ձեռքը մեկնելով կա-
րօտ զէյթունցիներին, հասարակաց կար-
ծիքը և այդ կարծիքն արտայայտող պար-

բերական մամուլը իրաւունք ունեն հետա-
բերվել թէ՛ ի՞նչ է գործում Կ. Պոլսի
յանձնաժողովը, ի՞նչ միջոցներ է դիմում
կարօտանքներին օգնելու, ո՞րքան դրամ է
ուղարկել նա արդէն Զէյթուն, ո՞րքան առ-
ձեռն դրամ ունի այս րօպէիս, ի՞նչ տեսակ
գործակալներ է ձեռքով է հասցնում փողը
զէյթունցիներին, ի՞նչպէս և ի՞նչ ձևով է
բաժանում այդ փողերը անսպաստան մնա-
ցած հրկիզանքներին և այլն:

Մեր կարծիքով հասարակութիւնը կա-
տարեալ իրաւունք ունի ոչ թէ միայն հե-
տաբերվել այդ հարցերով բայց և պա-
հանջել հոգեւոր իշխանութիւնից և Կ.
Պոլսի յանձնաժողովից ձիշդ և մանրամասն
հաշուետւութիւն իրանց արած իւրաքան-
չիւր կարգադրութիւնների և ստացած փո-
ղերի գործադրութեան մասին:
Պահանջել ժողովրդից փողերը բաւական
չէ. պէտք է և նոյն նուիրատու ժողովրդին
ամենամանրամասն հաշիւ տալ, և ոչ թէ
մի տարուց յետոյ միայն, երբ ամէն բան
կանցնի, մի փառաւոր «տեղեկագիր» միջո-
ցով, — այլ նոյն իսկ հիմա, ամէն ամիս, ա-
մէն շաբաթ, ամէն օր, թէ՛ կողմ կարճաւոք
բիւլետեններով միջոցով:

Գ. Ա.

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐ

Վերջին տարիների ընթացքում հայոց դպրոց-
ների թիւը ոչ թէ միայն չէ աւելանում, այլ և
զգալի կերպով պակասում է: Անդրկովկասի դա-
նապահ կողմերում նոյն իսկ շատ մեծ գիւղեր,
որոնք ունեն 150—200 տուն բնակիչ, դուրս են
դպրոցներից, և այդպիսով տարիները անցնում
են, բայց գրագիտութիւնը չէ կարողանում աճել և
զբաղեցնել կազմում են ազգաբնակչութեան մէջ
շատ ողորմելի տոկոս, դուք ոչ աւելի քան 40%
— 60%: Այդպիսով մեր ժողովրդական դպրոցնե-
րը ոչ թէ միայն աղուղութեամբ չեն ծառայում ի-
րանց ամենամեծ նպատակներից մէկին՝ այն է
գրագիտութեան տարածվելուն, այլ և չեն կար-
ողանում նպաստել մայրենի լեզուի ուսուցմանը,
քանի որ այն տեղերում, որտեղ հայերը թրքա-
խօս կամ վրացախօս են, որտեղ հայ ազգաբնա-
կութիւնը տարիների ընթացքում մոռացել է իր
մայրենի լեզուն և խօսում է օտար լեզուներով,
չը կան դպրոցներ, որոնք կարողանային նպաս-
տել հայոց լեզուի տարածվելուն հայերի մէջ:

Գա մի աչքի ընկնող պակասութիւն է ընդ-
հանրապէս մեր դպրոցական կեանքի մէջ: Մեր
եղած դպրոցները, որոնք բացվել են վերջին
տասն տարիների ընթացքում, թէ տեղական մի-
ջոցներով, թէ եկեղեցական փողերով, և թէ նոյն
իսկ մասնաւոր բարեգործական նուիրատուութիւն-
ների շնորհով, զլրատարապէս կենտրոնացել են
կամ քաղաքներում, և կամ այնպիսի կենտրոննե-
րում, որտեղ ժողովուրդը ընդհանրապէս աւելի է

ծանօթ գրագիտութեանը, և որտեղ հայ լեզուն
տեղական պայմաններին չորհով ժողովրդի առօ-
րեայ խօսակցութեան լեզուն է, իսկ այն տեղե-
րը, որոնք վաղուց արդէն դուրս են մայրենի լեզ-
ւի դիտութիւնից, և որոնց վրա ամենից շատ ու-
շադրութիւն պէտք է դարձնվէր, մինչև այժմ էլ
մնում են առանց դպրոցների, մինչև այժմ էլ
դուրս են թէ գրագիտութիւնից և թէ մայրենի
լեզուից:

Այդ չարիքի առաջը, անկասկած կարող են
առնել ժողովրդական դպրոցները: Բայց յայտնի
է և այն, որ ամէն անգամ, երբ խօսք է լինում
մի դպրոց հիմնելու մասին, և նոյն իսկ երբ շատ
դպրոցներ փակվում են, զլրատար պատճառը նիւ-
թա կան միջոցներ ի պակասութիւնն է: Հա-
տատարապէս կարելի է ասել, որ մեր գիւղական
դասակարգը այժմ այլ ևս չէ յնամաքար չէ նա-
յում նոր դպրոցներ, ընդհանրապէս նա ուղում է
իր որդոց դպրոց տալ, ուսում տալ, մարդ չի-
նել, բայց տարաբաղաբար դպրոցներ չը կան:
Եւ յիշելով, ինչ ողորմելի տոկոս են կազմում մեր
այժմեան գիւղական դպրոցները, համեմատելով
գիւղական ազգաբնակչութեան հետ Որբան մեզ
յայտնի է, այսօր Անդրկովկասի հայոց դպրոցնե-
րի թիւը 150-ից հազիւ է անցնում, և դրանց
մեծ մասն էլ քաղաքներում: Եւ հիմնված: Թիֆլի-
սի թեմի հայոց դպրոցների թիւը, եթէ չենք
սխալվում, 40-ից չէ անցնում, թէ և Թիֆլիսի թե-
մը դպրոցների շատութեան կողմից համարեա ա-
ռաջին տեղն է ընտան: Երեսնի նահանգում
զուտ հայաբնակ գիւղերի թիւը 350-ից աւելի է.
Գանձակի նահանգում հայաբնակ գիւղերը 200-ից
շատ են, Թիֆլիսի նահանգում այդ գիւղերի թի-
ւը հարիւրից աւելի է. և դրանից արդէն պարզ
երևում է, թէ որքան չնչին տոկոս են կազմում
մեր դպրոցները համեմատելով գիւղական ազգա-
բնակչութեան հետ, որի թիւը կէս միլիոնից անց-
նում է: Հասկանալի է դրեմք, որ այդքան զըպ-
րօցներով և այդպիսի դպրոցներով դժուար է յո-
շտիկել կերպով գրագիտութիւն տարածել, և
ծառայել ազգաբնակչութեան մտաւոր զարգացման
գործին:

Իսկ միւս կողմից նիւթական միջոցների պա-
կասութիւնը, և գիւղական հասարակութեան չը-
բաւորութիւնը, դժուարացնում են գիւղերում նոր
դպրոցներ հիմնելու գործը, քանի որ ամէն մի
գիւղ, որը ունի 60—70 տուն բնակիչ, դժուար
թէ կարողանայ մի առանձին դպրոց պահել իր
համար, որը առնուազն 700—800 ռուբլի ծախ-
կը պահանջի: Հիշելով, որ մենք չունենք շա-
րժական դպրոցներ, բայց կայ մի միջոց որով
կարելի է նպաստել գիւղական ազգաբնակչու-
թեանը իր որդոց ուսում տալու. դա, այսպէս ա-
սած կենտրոնական դպրոցներն են: Եւ ի՞նչ
է: Պարզեցւել մեր միտքը: Կենտրոնական
դպրոց ասելով չը պէտք է հասկանալ մեծ, միջ-
նակարգ դպրոցներ. կենտրոնական դպրոցը պէտք
է հիմնվել երեք, կամ չորս գիւղերի համար, ո-
րոնք իրանց զիջելով, իրանց հեռաւորութեամբ, և
իրանց զարգացնելով ամբողջով պայման-
ների մէջ են գտնվում, որ կարող են ընդհանուր
հաշուով մի դպրոց հիմնել գիւղերից մէկի մէջ,
որտեղ կարող են սովորել հարեան մի քանի գիւ-
ղերի երեխաները: Այդ տեսակ դպրոցը կը ծա-
ռայի միանգամից մի քանի գիւղերին: Գլխաւոր
ծախսը իրանց վրա կանոնն մի քանի գիւղեր, և
այդպիսով այն, ինչ որ չէր կարող անել մի գիւղ
իր ոյժերով, նոյնը կարող են հեռավորութեամբ ա-
նել մի քանի գիւղեր միասին Այդպիսի դիմը ու-
նեցող գիւղեր, որտեղ երեխաները կարող լինէին
մի գիւղից միւս գիւղը գնալ սովորելու համար,
շատ կան մեր բոլոր նահանգներում: Բայց կան
և այնպիսի դիմը ունեցող գիւղեր, որոնք թէ և
չեն կարող ընդհանուր հաշուով պահել մի կենտ-
րոնական դպրոց, որովհետեւ գիւղերի հեռաւո-
րութիւնը թոյլ չի տալ երեխաներին ամէն օր
յաճախել դպրոց և տուն վերադառնալ, բայց ե-
թէ մեծ գիւղերից մէկում հիմնվի մի կենտրոնա-
կարգ, շրջակայ բոլոր գիւղերից մեծ քանակու-

թեամբ աշակերտներ կարող են խմբվել այդ գիւ-
ղում, և այդտեղ ապրելով ուսանել դպրոցում:

Պէտք է ասել, որ այդ տեսակ դպրոցների նը-
մուշներ արդէն կան մեր գաւառներում, ուր սո-
վորում են հարեան շատ գիւղերի երեխաներ, և
այդպիսով միջոց են տալիս դպրոցին գոյութիւն
ունենալու: Հարկաւոր է միայն աւելի կանոնաւո-
րել այդ տեսակ դպրոցները և շատացնել դրանց
թիւը, հիմնելով կենտրոնական գիւղական նոր
դպրոցներ այն բոլոր տեղերում, որոնք իրանց
զիջելով յարմարութիւն են ներկայացնում այդպի-
սի ուսումնարանների համար: Գրանուով միայն
կարելի է դպրոցներ բանալ մեր բազմաթիւ փոք-
րիկ գիւղերում, որոնք անկարող լինելով առան-
ձին առանձին ուսումնարան պահելու, ոչ մի մի-
ջոց չունեն իրանց որդոց ուսում տալու: Այդ
տեսակ գործ դրուի բերելու համար, ի հարկէ, դե-
կավարող ոյժ, նախաձեռնող, և առաջնորդ պէտք
է լինի:

Բայց ով է այդ ղեկավարող ոյժը, ով է այդ
նախաձեռնողը և առաջնորդը: Ահա հարց, որի
վրա պէտք է խօսել:

Խ. Մ.

ՆԵՐԿԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են: «Այս քանի օրերս
դեռ չարունակում են դալ դէպի Ամարթի նորա-
կոչ գիւղերները: Այս օրերս եկան և անցան
Շիրակի և Նոր-Բայազետի գաւառի Մադրա մա-
սից զինուորացիների մի քանի խմբեր»:

ԵՐԵՒԱՆԻՑ, ղեկտեմբերի 28-ից մեզ գրում են:
«Չը նայելով որ երեք օր շարունակ ձիւն եկաւ
մօտ կէս արշին բարձրութեամբ, բայց վրա հա-
սած տաք օրերի պատճառով եկած ձիւնը սկսեց
նորից հալվել»:

Մեզ գրում են ՊԵՏԵՐԲՈՐԳԻՑԻ հետեւեալը: «Բա-
ղաբան, ինչպէս ձեզ յայտնի կը լինի լրագրնե-
րից, ղեկտեմբերի 22-ին բացվել է ՎՃՐԻՍՏՅՈՅ
Գործողի անուանված տեղում մի հետաքրքիր
ցուցահանդէս չլուսաւորող նիւթերի և առարկա-
ների» (ВЫСТАВКА ПРЕДМЕТОВ ОБЪЕДИНЕНИЯ): Եթէ
աղուղի այցելել ցուցահանդէսը, կաշխատեմ հա-
ղորդել «Մշակի» ընթերցողներին տեսածս: Գու-
ցահանդիսի կառավարիչներից մէկը հայ է, պ.
Ալեքեան»:

Օգէսայում հրատարակվող «Новороссійскій Те-
леграфъ» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը, հերքելով
այն լուրը, որ տարածեցին մի քանի լրագրներ,
և «Համասի հեռագրական գործակալութիւնը»
թիւ թէ Կ. Պոլսի հայոց պատրիարք Գարուբիւնը
զիտաւորութիւն ունի գնալ Հռօմ պապին նրա յօ-
բելեանի առթիւ շնորհաւորելու, աւելացնում է.
«Հայ-կաթօլիկների մէջ, ինչպէս հաղորդում են
ինձ գործին ծանօթ մարդիկ, սկսվել է վերջին
ժամանակներս և արագ առաջադիմութիւն է ա-
նում յետադարձ շարժում, այսինքն շարժում դե-
պի լուսաւորչականութիւնը, դէպի ազգային եկե-
ղեցին: Այդ շարժումը նմանութիւն ունի Կիրիլ-
Մեթօդեան շարժման հետ, որ նշմարվում է Աւ-
ստրիայի կաթօլիկ-պալականների մէջ: Գա ժա-
մանակի վերին աստիճանի նշանաւոր յայտնու-
թիւն է»:

Օգէսայից ստացած լրագրները հաղորդում են
որ մեր յայտնի դերասան Ալաւան, ղեկտեմբերի
18-ին մասնակցելով վերջին ներկայացման («У-
вернение» պիեսայում), թողնելու է Օգէսա: Բայց
ուր պիտի դնայ յարգելի արտիստը, լրագրները
չեն ասում:

Միջոց չունենալով այն բոլոր անձանց ջոկ ջոկ
պատասխանել, որոնք պատիւ արեցին թէ նա-
մակներով և թէ հեռագրներով շնորհաւորել
«Մշակի» 16-րդ տարեիւրջանի սկսվելը, խնդրում
ենք նրանց ընդունել մեր շնորհակալութիւնը
ներկայ տողերի միջոցով:

նով, այդպիսի դիպումներն անկարելի է ժողովրդին հանել իր այժմեան մեծերութիւնից, իր այժմեան ազգայնացման վիճակից: Մի կողմից դիմադրելով տեղական իշխանութեան կամայականութիւններին, միւս կողմից հարկաւոր է ուշք դարձնել նոյն իսկ ժողովրդի դարեւոր ազդեցութեան և ստրկական յատկութիւններին վերադարձնելու վրայ: Այդ առիթով անկարելի է մոռացութեան տալ այն բոլոր միջոցները, որոնց մասին մի քանի անգամ խօսք է եղել, և որոնց դործադրութեան մասին պէտք է հողայն առ այժմ Թաւրիզի հայոց առաջնորդարանը: Ամբողջ Պարսկահայաստանում միայն մի քանի դպրոցներ կան, ժողովրդը չարժանապատէ է մնալ իր նախնի մտեւութեան, թմբուկեան մէջ, և այդպիսով, ի հարկէ, նա անկարող կը լինի թէ իրան պաշտպանել, թէ աւելի կանոնաւորել իր կեանքը, և թէ ներշնչել ինքնաճանաչութեան զգացմունքներով:

Մի կողմից պաշտպանելով ժողովրդի իրաւունքները անարդարութեան դէմ, միւս կողմից պէտք է իրան ժողովրդին սովորեցնել, որ նա ինքը կարողանայ իմանալ իր իրաւունքները իսկ այդ մասին համարեալ թէ ոչ ոք չէ էլ մտածում: Անցեալ տարի հարց բարձրացաւ Արեւմտահայաստանի մի կենտրոնական դպրոց հիմնելու մասին, որը պատրաստէր վարժապետներ և հոգեւորականներ երկրի համար,— և այդ միտքը մինչև այժմ էլ միտք մնաց: Նոյն դրութեան մէջ է միջնացել և Թաւրիզում հայոց տղարան բանալու միտքը, որի միջոցով կարելի էր մեծ զարկ տալ պարսկաստանցիների մտաւոր դարգացման գործին: Թաւրիզի հայոց առաջնորդարանի և երիտասարդութեան անմիջական պարտաւորութիւնն է իրաւորեալ այդ բոլորը, որպէս զի կարելի լինի արմատական փոփոխութիւն մտցնել պարսկահայերի վիճակի մէջ, առանց որի ինքը ժողովրդը չէ կարող իրան անաւելի և այդպիսով անպակաս կը լինին թէ զանազան հարստաւարութիւնները, թէ զանազան կրօնական պրօպագանդաները, և այն տնտեսական ու բարոյական հարուածները, որոնց նկիւններն են և կը շարունակվի ենթարկվել պարսից պետութեան տաճարներում ապրող հայ ժողովուրդը:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՔԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, 22 դեկտեմբերի

Այսօր «Արեւելք» հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ Խոյի մէջ այս առաւօտ յանկարծակի մեռել է Սպարդաւեան պ. Թովհանէս, և թէ ամբողջ Խոյի սգով մէջ է: Այդ դոյժն անշուշտ իրական ցաւ մը պիտի պատճառէ թէ՛ Պոլսի և թէ՛ ամենուրեք: Համարեալ, ինչպէս նաև իւր հանգուցեալ եղբայրն, իրենց բարեգործական ձեռնարկներով սիրելի ընծայած էին ազգին Սպարդաւեան անունով Խոյի մէջ հիւանդանոց մը, զորոց մը, որոց համար հարկւր քառասուն հազար ռուբլիէ աւելի ծախսուած էր, Սպարդաւեան անունն ազգին իրական բարեբարաց աւանդ մէջ դասաւորած էին: Արեւմտեան դատ ամէն բարեգործական հաստատութեանց առատօրէն կը նպաստէին թէ ինքն հանգուցեալն և թէ վախճանած եղբայրը Կոնստանդնուպոլսի մէջ Սպարդաւեան կը նուրբէր հազար ռուբլիի դուար մը Պոլսոյ ազգային հիւանդանոցի վերահսկողութեան համար:

Ի հարկէ, մեզ համար փափազելի էր, որ Սպարդաւեան ուշադրութիւն դարձնէր Հայաստանի վրայ, այնտեղ գործելու և ազգին օգտակար ըլլալու աւելի ասպարէզ կայ, մեր կենսական պէտքերն անդ են: Բայց ամէն ոք իւր կարծեաց և իւր դրամին տէրն է, մեզ համար փափազելի է անշուշտ, որ Սպարդաւեան ժառանգներն ալ Հայաստանի համար մտածեն:

Հայաստանէն առնուած լուրերն քիչ թէ շատ կարեւոր են: Վառէն կը հաղորդեն թէ՛ Արսէն վարդապետ Թոմարեան միշտ ի բանտի է, ու չինչ յանցանք կը գտնեն անոր վրայ, կերել թէ զլսաւոր մեղքն է կովկաս գտնուած ժամանակին հրատարակուած մէկ տետրակն, զոր այժմ ալ կը թարգմանեն թուրքերէնի. չը կարծուի, որ կարճատեւ քան մը գտնել ներկային համար. և տարօրինակ ալ պիտի թուի թէ Արսէն Թոմարեան մը օսմանեան կառավարութեան երկիւղ ազդելու չափ դրուածն ունենայ:

Տեղբայրակիցներն լուրերն տուել միմեկարեան են: Արեւմտահայաստանէն չեն շարունակուիր, ոչ թէ

այն պատճառաւ կըսէ «Արեւելք», որ ցաւոք ու չարեաց դարման տարուած են, այլ այն պատճառաւ որ յօդս ցնդեր են խոտաւորուած յոյներն, կաթողիկէ եղբք, բողոքական եղբք և ձեզ պիտի պաշտպանեն այս ինչ այն ինչ տէրութիւնը, կըսեն այլապէս հայոց և երբ խեղճներն կը խաբուին, կուրանան իրանց կրօնքն, այլ ևս ոչ պաշտպանութիւն կայ, ոչ յօդս Զանազան գիւղեր Տիգրանակերտի մէջ վերստին կը գտնուին իրենց եկեղեցւոյ գիրկը: Այս մասին «Արեւելք» հետեւեալ կը հաղորդէ:

«Զետաւարձ չորժուսն սկսած է, և շատեր կախարհաւոր իրենց զոյտ հաւատն և ոտը կրօնքն ուրացած լինելուն համար: Այսպէս, ի Հայնի, 60—70 պապական տունէն 15 տուն միայն մնացած է, ի Հոփում գիւղ՝ 18 է զիւղաքաղաքին առընթեր, ուր 60—70 պապական տուն կային, այժմ 20—30 տուն մնացած է. կրեւտա գիւղն, որ քահանայով հանդերձ կրօնաւորն եղած էր, այժմ ամբողջովն վերադարձած է ի ծոց մայրենի եկեղեցւոյ և միայն քահանան պապական կը մնայ՝ կանոնաւոր ամսական ստանալուն համար: Պէտքիկ մէջ նոյն իրողութիւնը պատահած է, թէ և քահանայն պապական մնացած է. Աղբիլ մէջ ալ պապականաց թիւը շատ նուազած է, և ամենուն ալ վերադարձն յոյժ դիւրին է եթէ պապականաց գործունէութեան և եռանդեան մէջ չորրորդն իսկ գործ դնեն մեր եկեղեցականքը»:

Այս լուրին պատճառած փոքր ինչ խոգութիւնը կը չափաւորի, երբ կը լսենք թէ աւելի մեծ փոփոխ կայ. խաղամանաւոր գաղափարը սկըսած է ծագում առնել: Եթէ քրիստոնեայք իւրաքանչիւր, հաւանքովն աւելի հանդիստ կըլլան, կամ գէթ այդպէս կը կարծուի: Եւ հաւանական է որ իսկզբանէ խաղամանաց հայերու մեծ պաշտպանութիւն ըլլալ կենդրոնէ մի քանի ժամանակի համար, որպէս զի թէ իրենք զոհ մնան և թէ ուրիշներուն օրինակ հանդիսանան: Օրինակի համար թուրքերէն լրագիրք կը հաղորդեն թէ՛ Բաղէշի կողմերու կաղարք գաւառի Պատրիարք քրիստոնեայք ընդունած են իսլամութիւնը, կենդրոնէն, այսինքն Պոլսէն համակրական ցոյցեր եղած են: Հրաման իրկուած է որ միջկիթ մը, զորոց մը կառուցուի կառավարութեան ծախքով: Ի հարկէ ուրիշ պաշտպանութիւններ ալ կըլլան— Պատրիարք նեստորական են, հայ չեն, բայց և այնպէս քրիստոնեայ են և օրինակը լաւ չէ:

Արեւմտահայ ժողովը բաւական կը յուզուի այս խնդիրներով, որոնցմ է այցելու հովիւներ խրկել: Մի քանի անգամ է Արեւմտահայ ժողովոյ նիստերն նուիրված են այս խնդրոյն: Վեց վարդապետ խրկել ի Հայաստան որպէս զի մտնեն ամէն քաղաքներ ու գիւղեր, միմեկարեան ժողովուրդն, յուսարկեն խեղճներուն թէ կըլլէ պիտի գտնէ Պատրիարքարանի այժմու ցաւով վիճակը, թէ պէտք է որ սպասեն, յարգեն իրենց հայրենի եկեղեցին: Կերել թէ վարդապետները ծանր պայմաններ պիտի դնեն Տիւնիքը այլապէս ինքնասէր, ծոյլ լինելու աներեսութիւնը պիտի սեննան:

Արեւմտահայ ժողովը մտադիր է նաև հանգանակութեան հոգալ այդ վարդապետաց ուղեւորութեան ծախքն: Մօտ երկու հազար ռուբլի պէտք կայ, Պոլսոյ հայք անդադար կը դանդաղան ճիւղերից և ուրիշ կրօնաւորաց դէմ, արեւ երբ անոնք մարդու դրամ կը դործածեն, մենք ալ արդեօք ամենաօրինակ քան մը պիտի ընենք, թէ միայն լեզուսիւ երկնցնելով պիտի բաւականանանք:

Պատրիարքական խնդիրը տակաւին նոյն վիճակին մէջն է: Արեւի բաշակի նախադասութեամբ կազմուած յանձնաժողովի տեղեկագիրը խրկուած էր պետական ժողովին, սակայն պետական ժողովին օրէնսդրական ձեւով,— որուն յանձնուած է խնդիրը— նախագահ Մանուկ ձեւակերպին բաշա զանձուց նախարար անւանված լինելով պէտք է որ նոր նախագահն ընտրուի որպէս զի այդ խնդրի քննուի և տակաւին չընտրուեցաւ: Եկեղեցականքը կըսեն թէ մինչև ծնունդ թէ չը կարգադրուի այդ խնդրին, անպատճառ պիտի դիմեն կայսեր:

Այս վիճարոց կարգադրութիւնն ի միջի այլոց պէտք է ինքնացնել Միացեալ Ընկերութեանց օգտին համար: Կառավարութեան կողմանէ ծանր կացութեան մէջ է ընկերութիւնը, այսօր կը լսենք թէ Մուշ քաղաքին կենտրոնական վարժարանը, որ Միացեալ ընկերութեանց խնամոց ներքն է, կառավարութեան կողմանէ կը փակուի: Ինչպէս Զենք դիտել:

Այս շարքի բաւական բնորոշութիւն է մասնաւոր

թիւնց կողմանէ: Ամենքը լսելու, ըսելու, գրելու գրեւոր կողմանէ: Այնպիսի հրատարակութիւններ եղած են— չուրեքի կարգաւ այլ պատմեցին— որ անհիմն, սուտ, դրամարտէ տեղեկութիւններով կը մտնեն իւր թշնամի կառավարութեան և Սուլթանին այն ամէն տնէն, ոչ զերեզմանոցի խնդրոյն մէջ ազգին ու եկեղեցւոյ շահերը պաշտպանած են:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Վերջին ժամանակներում եւրոպական լրագրութիւնը լուրեր կը հաղորդում, որ իւրիս թէ շուտով դաւարվելու է միջազգային կոնֆերանսի: Վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այդ լուրը այնքան էլ հիմնաւոր չէ:

— Կ. Պոլսում տեղեկութիւններ են ստացված, որ յայտնի բոլորական գործիչ Ստոյանով այժմ ճանապարհորդում է Մակեդոնիայում: Այդ ճանապարհորդութեան հետ կապում են քաղաքական պրօպագանդայի հարցը:

— Րուսները մէջ անցյալ մարտի անցեալ դեկտեմբերի վերջերին տարածեցին պրօկլամացիաներ՝ կըրօնական պրինցիպէն:

— Փարիզից գրում են, որ ռուս-աւստրիական պատերազմում փոփոխութիւններ են համարում, և չը նայած վերջին խաղաղասիրական ընթացքին, կարծում են, որ առաջիկայ գարնանը ընդհանրապէս տեղի կունենան մի քանի պետութիւնների յարաբերութիւնները:

— Նոր տարվայ առիթով եւրոպական լրագիրները յայտնած մտքերը և արտայայտած հայեացքները միանգամայն օպտիմիստական բնույթով են: Նոյն իսկ գերմանական կիսապաշտօնական լրագիրները աշխատում են ցոյց տալ, որ քաղաքական դժբերքը բոլորովն խաղաղ կերպարանք են առել:

— Հռոմից «Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է միջ հետեւեալը. «Պապի առողջութիւնը փոփոխութիւններով է, նա մի քանի անգամ ուշաթափ եղաւ»:

— Զերնոգորիայում, ինչպէս հեռագրում է միջ «Հիւսիսային գործակալութիւնը» Յետինիէյից, սաստիկ սով է. 30.000 մարդ զրկված է ապրելու բոլոր միջոցներից: Օղեսայից հայ բերող նաւը դեռ ևս տեղ չէ հասել:

— Բերլինից հեռագրում են, որ կայսրի սուղ-ջութիւնը լուսնում է:

ԻՍԱՆ ԼՈՒՐԵՐ

Այնպիսի հաշիւ լրագիր «Times»-ի հարկւր-մակը լրացած այս տարի (նոր տօմար): Այդ լրագրի առաջին համարը լոյս տեսաւ սրանից հարիւր տարի առաջ, այն է 1788 թվին: «Times»-ի հիմնողը Զոն վալտեր էր, այժմեան հրատարակողը պապը: Ամենից առաջ «Times»-ը ըսկեց գործածել արագատիպ մեքենան: 1872 թվականին դա իր համար առանձին հեռագրական գիծ անցկացրեց լոնդոնից մինչև Փարիզ: Միմիայն հեռագրիների վրայ այդ լրագիրը ծախսում է տարեկան աւելի քան 25 հազար ֆ. ստերլինգ: «Times»-ի առաջնորդները գրում են սովորաբար գիշերվայ ժամը 10-ից մինչև 2-ը (անկախ-կան լրագիրները գրաքննիչն են նիւթերով): Համարը տպվում է գիշերվայ ժամը 31/4-ին, և արդէն ժամը 4-ին կամ 5-ին պատրաստ համարը վաճառ է հանվում և ուղարկվում է բաժանորդ-ներին: Լրագիրը գաւառներում տարածելու համար կան երկաթուղու առանձին գնացքներ, և առաւօտեան 9 ժամին Լոնդոնի լրագիրները ըստացվում են Մանչեստրում և Լիվերպոլում: Ահա այդպիսի պայմանների մէջ լրագիրները յիւրաքանչիւր կը հրապարակ գործել, ինչպէս որ գործում է եւրոպական մամուլը:

Եւրոպայի դանապան կողմերում այս տարի ձմեռը աւելի քան ցուրտ է: Խոտախոտներ, ձրան-սիւլաւ, Սլոնիսիւր, Յունաստանում և ուրիշ շատ տեղերում սաստիկ ձիւն է եկել և շարունակում է դաւ. սաստիկ ցրտերի և ձիւնի պատճառով շատ տեղեր կը լրջանան զմայրերը: Զատ տեղ էլ լրագիրը որթեր և ծառերը ցրտահար են եղել արդէն: Մի քանի տեղեր զբոս-բոսները փակվել են սաստիկ ցրտերի պատճառով: Կրտ հակառակ մեր Անգլիոյ կառավարում այս տարի ձմեռը ընդհանրապէս ոչ թէ միայն ցուրտ չէ, այլ մինչև անգամ տաք է: Զինքը առաջին անգամ, ինչպէս մեզ գրում են դանապան կողմերից, միայն գեկտեմբերի վերջերին եկաւ. իսկ թիֆլիսում յունիսիսի 1-ին, համարեալ թէ դարեւանային եղանակ էր. ոչ ցուրտ էր, ոչ ձիւն կար, և ոչ էլ քամի: Ահա սաւարակ կովկասում վերջին տարիներ

րի ընթացքում նկատուում է կլիմայական փոփո- լութիւն և այդ փոփոխութիւնը տարուց տարի աւելի զգալի է դառնում:

Ներկայ 1888 թվի վերաբերութեամբ հայոց հաշիւաւոր է ֆէ միւս ի ն հետեւալ գուշա- կութիւններն է անուում: Այս տարի շատ առատ կը լինի ցորենով և այլ պտուղներիով: Զմրան ըսկեցում կանձնէ, և չափազանց շատ ձիւն կը գայ: Երեւում է մեծ հարուած՝ մանաւանդ ծերերի և երիտանների մէջ: Այլ և այլ մարդկանց մէջ զիւն և կրիւնը կը բարձրանան իրանց թագաւորի դէմ: Երաւարների և սիրելիների մէջ տա- րածայնութիւններ կը լինեն: Գործերի և վաճա- ւականների մէջ կը արեւն ներդրութիւն և խաբէ- րութիւն: Պաշտպան պաշտօնականներն մեծ վնաս և նեղութիւն կը լինի: Ամառը կը մեռնէ: Նշա- նաւոր մարդիկ. Արեւելքում կը լինի խաղաղու- թիւն, իսկ Արեւմտեւորում (եւրոպացիների մէջ) տեղի կունենան մեծ արկնահեղութիւններ և աղբերի ընդհարումներ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 1 յունվարի: Փոխ-ադմիրալ Մեծ Իշխան Ալեքսեյ Ալեքսանդրովիչ ստացաւ ծովագետի աստիճան: Բարձրագոյն հրովար- տակի հետ միասին շորված են հետեւեալ չքանչանքը հետեւեալ անձանց. պետական խոր- հրդի անդամ, զինեալ-ադիւտանտ Տիմաշկին ս. Անդրէասի չքանչանք. ներքին գործերի մինիստր կոմս Տոլստոյին, պետական վերաստուգիչ Սոլ- կիին և Նորին Մեծութեան սեկական զինանա- տան կառավարիչ Տանէլիին ս. Վաղիմիրի առա- ջին աստիճանի չքանչանք. ս. Սինդի աւագ-պրօ- կուրօր Պրեզիդենտովին, պետական կալուածները մինիստր Ստրովակովին, ստատու-սեկրետար Ման- սուրովին և Կախանովին, և Բարձրագոյն պալա- տի մինիստր Վորոնցով-Իլաչովին: Ալեքսանդր Նիկոլաւ գահաւարդը նշանեցը— Ֆինանսների մինիստրութեան կառավարիչ Վիշնեգրադսկի Նը- չանակիցաւ Ֆինանսների մինիստր: Միւսային մի- նիստրութեան կառավարիչ փոխ-ադմիրալ Շեստա- կով ստացաւ արմիրով աստիճան. Ժանդարմների առանձին բաժնի հրամանատար Շերեկովին և ար- դարադատութեան մինիստրի օգնական Մարկովին չնորված են Սպիտակ Արծի չքանչանք— Յայ- տարարվում է, որ Պետերբուրգի, Մոսկովայի, Կա- զանի, Սարկովի և Նովորոսիսկի համալսարաննե- րում դաստիարակութիւնները չեն սկսվի նշանակ- ված ժամանակին, այն է յունվարի 15-ին. պարագ- մունքները սկսվելու ժամանակի մասին վաղորդօր առանձնապէս կը յայտարարվի: «Правит. Вѣст.», «С. Петерб. Вѣд.», «Моск. Вѣд.», «Нов. Вр.», «Новости», «Гражданинъ» և համալսա- րանական քաղաքների տեղական լրագիրներում:

ՓԱՐԻՋ, 1 յունվարի: Մանկավարժ պաշտօնի մէջ, Ֆլօի մի ճառ ասեց, որի մէջ այն միտքը յայտնեց, թէ անհրաժեշտ է, որ օրէնսդրական և գործադրական իշխանութիւնների մէջ միութիւն լինի, և որ Ֆրանսիան պէտք է գործը լինի, որ- պէս զի նրա զանազանութիւնը, ցանկանային և նրանից, իւրեւ հակառակորդել, միմեկարեան:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 1 յունվարի: Թիֆլիսի դատաս- տանական պալատի պրօկուրօրի օգնական Սիմո- տէն և Թիֆլիսի նահանգական դատարանի պրօ- կուրօր Չալովակի ստացան դէյստովիտների ստատ- սկի սովետիկի աստիճան: Թիֆլիսի նահանգա- կան դատարանի անդամ Սպիլեդոսովին յայտա- րարված է Բարձրագոյն խորհրդանութիւնը: Թիֆլի- սի արական երկրորդ զինմապիսի զինեկտոր Լի- լովին չնորված է ս. Ստանիսլավի առաջին աս- տիճանի չքանչանք:

ԼՕՆԴՈՆ, 1 յունվարի: Մարկիզ Սալլուրի պահպանողականների բանկետում մի ճառ խօ- սեց, և ասեց, որ Եւրոպայի դրութիւնը մի փոքր լուսացել է և որ, յամենայն դէպս, խաղաղութիւ- նը մօտիկ տղադարձում ապահոված է:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 2 յունվարի: Բոտիկանութեան զեպարտամենայի զինեկտոր Կուրնովի ստացաւ տայնի սովետիկի աստիճան: Ս. Պետերբուրգի կոմսերկտորիայի զինեկտոր Կուրնովի չնոր- ված է դէյստովիտների ստատսկի սովետիկի աս- տիճան:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 2 յունվարի: Զմեռային պալա- տում տեղի ունեցաւ Բարձրագոյն կըք ս. պատա- րադին ներկայ լինելու համար: Դամբարանութիւնից յետոյ Նոյա Վալսեկական Մեծութիւնները բարե- հաճեցին ընդունել զիւլովմատիական կորպուսի չնորհաւորութիւնները:

